

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

ԼՈՒՍԱԾԻՐ ՇԱԲԱԹԱՑԵԱԼ ՎԱՆՔԵՐԷՆ

(Շաբ. տես Բազմավէպ. 1934. էջ 68)

Վարիվանք (Ս. Երկոց մանկանց վանք) Բինկեանի։ Սա Եփրատի եզերքը Բինկեանէն երեք քառորդ ժամու հեռաւորութեամբ 3-4 դարերէ ի վեր Շաբաթացեալներու կարգը անցած էր. բայց մնացած էր ուխտավայր ու վանք այդ օրերէն ցայսօր։ Իր ամբողջ հարստութիւնը կորուսած. աւրօտավայր, արտորայք, անտառակ՝ դարերու ընթացքին ժողովրդեան սեփականութիւնը դարձած էր և դեռ վանքին անունը կը նշանակուէր սեփականութեանց թղթերուն մէջ։ Իր շէնքերը կործանած, լոկ հիմերը, շէնքերու կամարները քարուկիր, հողերու տակէն կը գտնուէին, որոնք հարուստ ու ճոխ վանքի մը իսկութիւնը կը յայտնէին։ Այժմուս կը մնային երեք պարտէզներ. մի քանի արտօրայք, գեղեցիկ աւազանով մը լոյս աղբիւր մը։ Մատուռ մը՝ անմիջական քովիկը Եփրատին, որ վերջէն յաւելեալ ու շինուած էր Մարտիրոս Ամիրայ Ղօնչէկիւլեանէ։ Մարտիրոս Ամիրայ Բինկեանի յոյժ անուանի ամիրաներէն մին եղած է, որոնցմէ մի քանիք քանի՛ քանի՛ եկեղեցիներ շինած են ու հարուստ յիշատակներ թողած։

Վարի վանքը Սեւ հողերու հարստութենէն ու հաստատութենէն որչափ կը յիշուի ի շարս Արապայի Ս. Նարեկացիին, Զիմառայի վերի ու վարի վանքերուն, Տիվրիկիի Ս. Լուսաւորչին և Կասմայի Բագրատունիքին հետ, սակայն շատ հաւանականօրէն երբ նախ քան զՔրիստոս մեր նախնեաց բնակութիւնը հոս կը հաստատուի կարգ մը արձանաքարերով, և նաև Հռովմէական տիրապետութեան օրերուն ալ հարուստ բնակչութեան մը գոյութիւնը կրկին արժէքաւոր արձանագրերով (քար) կը հաստատուէր. Քրիստոնէութեան հոս

մուտքովը, և վանուց արտերու մէջէն պեղմամբ հաստաբերձ կամարներու գոյութիւնն եւս մեզի հաւաստիք մը կրնար լինել թէ՛ վանքը աւելի հին թուական մը ունէր։

Բինկեան անունը, Արծրունեաց իշխանութեան օրերուն հոս ու հոն բնակութիւն հաստատած կամ կալուածատէր եղած իշխանազուններու, կամ պայազատներու անունով յորջորջուած է, ինչպէս Բենիկ իշխանին անունով՝ Բենկայ. Մուշեղի անունով՝ Մուշաղկայ, Աշոտի անունով՝ Աշոտկայ, եւայլն, այս անուններով ու հարստութիւններով փայլած են գիւղեր ու անտառներ, քաղաքներ, և այս օրերուն աւելի փայլած են վանքեր, ուխտավայրեր, ու եկեղեցիներ։ Վանքերն եղած են նաեւ լուսաւորութեան կեդրոն ու տուններ հաւատքի, կապի ու միջոցներ հայրենի սուրբ զգացումներու ու յառաջադիմութիւններու։

Օսմանեան Սուլթաններ դեռ բոլորովին տիրապետած չըլլալով ամենուն, եկող, անցնող զնացող ժամանակաւոր աւատատէրեր խուժեր են, քանդեր ու աւերակ դարձուցեր են շէն գիւղեր, աւաններ, եկեղեցի ու վանքեր։ Դիմադրողներ, կամ հատակոտոր ազատուողներ կրկին ու կըրկին շիներ ու շէնցուցեր են մասամբ բայց ոչ ամէնը, մանաւանդ մեծ վանքեր, այլ եւս չեն կրցած նոյն դիրքին ու աստիճանին վրայ մնալ, ու պահուիլ. և անոնք մնացած են լոկ ուխտավայրեր։ Բոլորովին Սուլթանական տիրապետութեան ժամանակ ալ գտնուած են ամէն դարու և տարիներու մէջ ընդվզողներ, չհպատակողներ, որոնք խուժաններու ու հորդաններու գլուխն անցած աւրջակելու ետեւէ եղած են բնակավայրեր, և իրենց վանտալական անկշտութեանը և կոշտութեանը թիրախ

ըրած են մանաւանդ սրբավայրեր, քաղաքներու ալ մնասած են շատ անգամ. և ասոնք մէյմէկ անուան տակ օրեր ապրած ու միշտ քանդած. և զբաղցուցած միշտ կառավարութիւնն ալ, այսպիսիք են Ճէլալիներ, Գատը գրաններ, Խարախօթիկներ Հայթաներ, Տէլիներ, Լէվէնտներ։ Այս միջոցին է որ Բինկեանցին ալ յայնկոյս Եփրատը թողլով նաեւ վանքն ալ ու յայսկոյս Եփրատին կ'անցնի բերդ ժայռերու Արծուէ բոյններուն մէջ ու իր բնակութիւնը կը հաստատէ, ուր կ'ապրին եղբի շատ հին օրերէն փոքրաթիւ Խարաւոնլունները, որոնք եւս Խարա Ըլանի գլխաւորութեամբ հոս ու հոն կ'ասպատակեն եղբի, և կը դիմաշարներուն, Լէվէնտներուն, թէեւ չեն կրնար բոլորովին դիմադրել և ազատել վանք, եկեղեցի կործանումներէ։ Վանքը իր շէն ու ճոխ օրերուն, լուսաւորութեան կեդրոն է եղած և երկար ապրած. տուած է ու սուլմական աշակերտներ, միաբանութիւնը փայլուն օրեր ունեցած է, և տուած նաեւ միաբանութեան ու վանքին պատիւ բերող եկեղեցականներ. ինչպէս Գրիգոր վարդապետ Դարանաղցի, Լէվէնտ Եջէլժ ու Տէր Ստեփան, որոնք վանքին կարող միաբաններու յաջորդական աշակերտներն են եղած, և դեռ ուրիշներ. երբ ամէն հարստութիւն շարաթացեալներու կարգն անցած է, թիւար է ունենալ ցանկը միաբանից ու դժուար է ունենալ ցանկը միաբանից ու նական աշխատութեան պտուղ՝ միայն մի քանի ձեռագիրներ մնացած էին Մայր եկեղեցւոյ գանձատանը մէջ. ասոնց մէջ արժէքաւորն էր փոքրագիր մագաղաթեայ Ս. Աւետարանը, նուրբ մաքուր մագաղաթ. գեղեցիկ զրչագրութեամբ և հիւսնալի պատկերներով, թռչնագրերով, ծաղկէ փունջերով, գոյներով վառ, ոսկին առատ. անաղարտ մնացած՝ բաց ի կափարիչներէն. այս կափարիչները նորէն շինուելու համար Տ. Յակոբ քահանայի խնդրանք եղբայրս Տ. Վարդան Քահաճի, դեռ աշխարհական՝ Պոլիս կը տանի ի նորոյ շատ վայելուչ ու շքեղ կազմով կազ-

մել կու տայ և կը դարձնէ կրկին Բինկեան Ս. Հրեշտակապետ. Պոլիս ցոյց կու տայ հնագէտներուն սոյն մագաղաթեան և կը գտնեն շատ արժէքաւոր ու վճարել կ'ուզեն 2-300 մետաղ ոսկի. երանի թէ այն ատեն վաճառուէր ու ո'ւ է հնութեանց թանգարանի մը սեփականութիւնն ըլլար, քան թէ հրդեհին կեր լինէր։

Որչափ որ կը յիշեմ յիշատակութեան մէջ Ս. Յակոբ եկեղեցւոյ մը անունը կար յայնկոյս Եփրատի, որ անուանի ու հռչակեալ։ Երկրորդ Յայսմաւուրը մեծադիր, ձեռագիր, խոշորագիր, լուսանցքներուն ծաղկազարդեր, զլխագրերը թռչնագիր. ու վերջամասին ալ մեղայ մը. եղբայրս աւելի հետաքրքիր այն ատեն, գոց կ'ընէ թէ կ'ընդօրինակէ, և Պոլիս հոգելոյս Դուրեանին ցոյց կու տայ ու ան շատ կը հաւանի. սա կը յիշեմ որ այդ մեղային մէջ տգիտութիւնը մեղք համարուած է և տգէտը մեղաւոր։ Վարի վանքը ուխտավայրն էր Բինկեանցիին և ամէն շաբաթ արան, շարան ուխտի կ'երթային. իսկ Զատիկի մեռելոցին հոն յատուկ Ս. Պատարագ կը մատուցուէր, և մեռելաճաշեր կը տրուէր շատ բազմաճախս. Համբարձման ալ Ս. Պատարագ կը մատուցուէր և սահմ. տօնը հոն կը կատարուէր այնքան փայլուն։ Իր օրին աւելի ճոխ հանդիսութիւն, Ս. Պատարագ, մատաղօրհնութիւն, ուխտի կը փութային Կասմայէն, Նարվեքէն, Զիմառայէն, Լիճքէն, Հասան Օվայէն։ Վանքին շուրջն ու բոլորը սուրբերու մատուցաներ, խաչքարեր, Ս. Յակոբ, Ս. Սէրգիս, Ս. Յովհաննէս, Ս. Նիկողայոս, Ս. Խաչ, Տէտէ պապա (Ս. Թագաւոր), Ս. Յովհաննէս վարի աղբիւրի, Ս. Յովհաննէս Եղիկանց, Թնդրակատար։

Երեւման վանք, (Ս. Երեւում կամ Ս. Փրկչի վանք). սա կը կոչուէր նաեւ Ակնի վանք, Բենկուվանք, ըստ հարեւանից Բինկեան մանաղարդը, և երբեմն ալ Լիճքի վանք։ Ակն քաղաքէն 7-8 ժամուան ճանապարհով հեռի, Բինկեանէն 4-5 ժամուան, իսկ քարի ճամբով 2 1/2 ժամուան, Լիճքէն 2 ժամու հեռաւորութեամբ։

Վանքը կառուցուած է Տէրսիմ Տուփիկ հսկայ Մնձուրի սէգ մշտնջենական ձիւնապատ լեռան ստորոտի քղանցքներուն տակ. երկու թեւերն են եղած Քիւփ տէրէի, գուբուխուփ բլրակն ու Գոհանամբի լեռ-բլուրը, որ կ'երկարի Գուհնափի լեռնադաշտին ու աղբիւրին և նոսնոփարի մշկաւէտ, ծաղկաւէտ զրախտափայլերուն բնաշէն: Վանքի զիւրը լեռնակերտ, տիրապետութիւնը արքայական, կեցած կ'իշխէ բազմաթիւ լեռներու, հարիւրաւոր լեռնակներու. իր պետին Մնձուրի փառքն է որ կը տարածէ ու կը սփռէ հրամայողի մը պէս, և լոյսը Ս. Երեւումին, Աստուածաբան Գրիգորին՝ որ շլացուց ու շողացուց Խաչովն իր Հոռոմայեցի հարիւրապետին աչացը, և լոյսովն Սնոր լուսաւորեցաւ, ու քանինն լուսաւորած ու լուսաւորուած են արեւ աչերովն անդինաւան ու անմահական. և քանի՜ լոյս, յոյս ու հաւատ սփռած է կեղեւած աչերուն, քարացած սրտերուն, և լոյս աղբիւրներ քանի՜ շա՛ն շա՛ն շոյալած ու շառաչած են կենդանութիւն կեանքներուն ու սրտերուն, հողին ու բոյսին, թփին ու ծաղկին, յաւիտենականին մշկաբոյր ու երկնաթոյր համովն ու հոտովն: Վանքին հաստատութիւնը Քրիստոսի առաջին դարուն էն վերջի տասնեակին կամ երկրորդին առաջին տասնեակին է եղած: Կը շինուի Պլատիկոս կամ Ապլատիկոսի, Եւստաքիոս, կամ Եւստաթիոս զօրավարին կողմանէ: Վարք Սրբոցի Զրո հատորին մէջ, էջ 251-255, կ'ըսէ թէ «Ապլատիկոս, այս տեղ եղջերու մը, և ի մէջ եղջերացն խաչն ու խաչեցեալն է տեսել, հաւատացել և մկրտուել է»: Ապլատիկոս Հոռոմայեցի զօրական, որ վանքի տեղէն գրեթէ 3 քառորդ ժամուան հեռաւորութեամբ հանքավայրին մէջ բնակութիւն հաստատած, ըստ սովորութեան որսի կ'ենէ, եղջերու մը հետապնդել կը սկսի. եղջերուն արագօտն քարաժայռերու մէջ կ'ապաստանի, ուր քարկողէն բուսած ծառին ոստերուն մէջ թաքցիլ կ'ուզէ. զօրականը քանիցս հրացանին՝ բլթակը քաշել կ'ուզէ որսալու համար, և ահա խաչն

ու խաչեցեալը եղջերուն եղջիւրներուն մէջ այնքան լուսաւոր կ'երեւին, որ ա՛լ հրացանը վար կը դնէ ու կը հաւատայ: Անմիջապէս ծառին քովի կը մատուռ մը շինել կու տայ համակ քարակոփ. դարերու ընթացքին ծառը կը մնայ մշտականաչ և է: Մատուռ բարձրանալու համար հարիւրաւոր քար սանդխամատերէ վեր ելնելու էր: Մատրան խաչքարերը քանի բլր համբոյրներ ընդունած են և կրանիթացած աղօթքներու և շունչերու տարափին տակ. կեանքի հանք, որ այդ ժեռուտ հիւսուածքէն ու կողերէն քառաթեւին, յորդած, լեռնացած ու բրգացած են հաւատաւոր լանջերու խորքին: Նոյն Զրո հատորին մէջ 285 էջին եւս կը գրէ. «Լսեմք թէ ի կողմանս Ակնոյ կայ վանք մի... թէ ակնեցիք առանձինն ջերմեռանդութեամբ պաշտեն զսուրբն Ապլատիկոս»: Մատրան շինութեան վերջ դարերու ընթացքին մատրան ժայռերու ոտքին պարսպապատ վանքը կը շինեն հոյակապ ու փառադիր, ընդարձակ շէնքեր ու յարկեր կը բարձրացունեն. գոմտուն, թոնրատուն, փռատուն, ոչխարաց փարախ, խոհանոց, շտեմարանատուն, ծառաներու տուն, միաբանից խուցեր, և ուխտաւորաց յատուկ փառաւոր սենեակներ: Վանքին մէջ երեք սառնարակ, կաթնորակ անմահան աղբիւրներ կը շաչէին ու կը շառաչէին: Ամէն բաժնի մէջ լի էր ու ճոխ պէտքերովը բոլոր, թէ՛ միաբանութեանը, թէ՛ ուխտաւորութեանը: Բոլորովին լեռնային զիրքին համար վիթխարի պարիսպներ հաստկող ու զոններն երկաթեայ բոլորած էին բոլորով որոնք ժամը 12ին երեկոյեան կը ճոնչէին և նիգերը դրուելով անխոց եւ անմատոյց բերդի մը երեւոյթը կու տային ու կ'առնէին: Վանքի եկեղեցին թէ և ոչ հոյակապ, բայց զեղակերտ էր, և քաղցր տպաւորութիւն մը կը թողնէր աղօթող ուխտաւորին վրայ. ու կ'առաւելուր հաւատն ու յոյս, սէրն ու լոյս որ Ս. Երեւումէն կենսաբոյր:

1. Աղեղն ու նետը՝ յետին դարերուն ժողովրդեան բերնին մէջ հրացանի փոխուել են: Երբ. Խմբ.

Վանքէն դուրս լոյս աղբիւրին միւռոնթափ կ'ընէին ինչ և ո՛րչափ մեծ հանդիսաւորութեամբ, պատարագչին նախագահութեամբ: Վանքին առջեւ կար երկարածիգ շարքը ուռենիներու, բարտիններու, և մէկ ժամուան ճանապարհով իր դաշտակը, արօտափայլը աջ ու ձախ. անմիջապէս առջեւ խաւ պաղջան, որ իրօք խաւ պտուղներ ու ու ծառեր և որթատունկեր ունէր ու աւազան մը ամիրայական: Գլխաւոր հասոյթն էր ոչխարներու կաթն և բուրդը և գառնուկները, որոնց թիւը 500ի մօտ. նաեւ արջառներ: Պոլսոյ մէջ մի քանի կալուած և պողին՝ զոր թեմօրէք պարտաւոր էին վճարել: Իր փառքի ու շէն օրերուն ունեցած է միաբանութիւն և միաբանութեան գլխաւորը, վանահայրը եղած է միևնոյն ատեն Ակնայ թեմագլխին առաջնորդը յաջորդաբար. ի հնումն վանահարք էջմիածնէն կը զրկուին եղբւ. «Պօղոս եպիսկոպոսէն յետոյ (և ճՂԱ-ՂԸ) մինչև Զմիւռնայի Յովհաննէս եպիսկոպոսն և մի քանի եպիսկոպոսք պաշտօն վարած են. Միքայէլ, Ղազար, Գալուստ, Յակոբ եւայլն. կէս դարէ և այսր պաշտօն վարող վանահարց անուանքն են. Զմիւռնացի Յովհաննէս եպիսկ. Ակնցի Պետրոս վարդապետ, Տիգրանակերտցի Յակոբ եպիսկոպոս. Կ. Պոլսեցի Նիկողայոս եպիսկ. Ազանեան, Ակնցի Յակոբ վարդապետ Հօփիկեան, Տիգրանակերտցին կրկին անգամ. Գարեգին վրդ. Սրուանծտեանց՝ յետոյ եպիսկ. երկրորդ անգամ կրկին Հօփիկեան. «Հնութիւնք Ակնայ 1895»: Միաբան վարդապետներ կը յիշուին, Եփրեմ վրդ. Բինկեանցի, Ստեփան վրդ., Դանիէլ վրդ. Վանեցի, Սարը վարդապետ, եւայլն: Վանահայր առաջնորդներ ամառը վանքը կը բնակէին: Վանահայրերուն մէջ մոռցուած է նշանակելը Տիգրանակերտի հրաշալի վարդապետն ու եպիսկոպոսը, որ հրաշք մը ալ գործած է եղբւ՝ անջրդի տեղ մը ջուր յորդեցնել տալովը, ու այնչափ խօսուած մանաւանդ շատ թանկարժէք զգեստի մը համար, որ վէճի ալ դուռ բացած էր թեմերուն ու թե-

մագլխին մէջ: Վանքին էն մօտիկ գիւղը Չեօփիէր գիւղն է, երեք քառորդ ժամ հեռու, որ երբեմն ալ հողի ու Միքայի խնդրով դատի բռնուած, յետոյ պահձե քեօյիւն ու Լիճք հայ գիւղը: Վանքին համբաւն ու հռչակը ամէն կողմ տարածուած էր և գունդագունդ կը դիմէին ուխտաւորները, և ինչ յոյսերով, ինչ անեղծ ու անկեղծ հաւատքով: Հոգեվարի մէջ եղող հիւանդներ մահիճով հոս տարուած են ու յետոյ ոտքով տուն դարձած: Ծնողներ իրենց փոքրերը մինչեւ 12 տարեկանին Ս. Երեւումին կը նուիրէին, կը վաճառէին և յետոյ սուղ գիներով ծախու կ'առնէին. մանաւանդ այն փոքրերը, որոնց նախկինները չէին ապրած: Հիւծախտաւորներ ալ բուժուած են: Գոհանամ լեռան վրայ գերեզմանի նման քար մը կայ, որուն վրայ նժոյգի պայտեր կան, ըստ աւանդութեան՝ Երկնաձի մը: Վանքի ձեռագրերը թեմագլխի փոխադրուած էին. մեծ արժէք մը չէին ներկայացներ ատոնք. երկու Ս. Աւետարաններ կային մեծ, 350-400 տարուան հնութեամբ, երկրորդը նուազ թուականով, ուրիշներ ալ թէեւ, բայց սա յայտնի էր թէ մեծ կողոպտուի հանդիպած է եղբւր, գրքերով, սպասներով ու այլ հարստութեամբ: Ուխտագնացութեան օրերն էին Ս. Զատիկի Երեւման շաբաթը, Ս. Վարդեմիւսին, և աւելին՝ Ս. Աստուածածնի շաբթուն: Ո՛րքան հանդիսութիւններով, խրախմանօք, ինչ լեցուկ յոյսերով ու ցնծութեամբ կը փութային. մինչեւ չորս ատուր ճանապարհաւ ուխտաւորներ փութացած էին: Հարեւաններ աւելի յարգանքով ու պատկառանքով, Տէրսիմցին ու Տուփիկցին: Շաբաթացեալներու այս շաբերը ինչեւ չէին ազդեր ու խօսիր սրտերու, և թրթռումներ հոգեւոր ու հոգեկան կեանքին ու անոր բոլոր ծալքերուն: Ո՛ր է թէ ուխտաւորի լեռներ փոխադրող հաւատքը սրտեր լեցնէր, Տաճարներ ու վանքեր կանգնէր եթէ ոչ քարերով ու շէնքերով՝ գոնէ սրտի տաճարներն ու վանքերը կերտէր և գէթ ատոնք շաբաթացեալ չլինէին:

(Շարունակելի) Գ. ԱՐԲԵՊՍ. ԱՐՍԼԱՆԵԱՆ